

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԻՆԳ ՏՈԿՈՍԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արփա-Սևան» ԲԲԸ և «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ միջև ս.թ. մարտի 15-ին կնքվել է վարկ տրամադրելու մասին թիվ 233603 լրացուցիչ համաձայնագիրը, համաձայն որի բանկը տրամադրում է ընկերությանը 260,000.00 ԱՄՆ դոլար (Երկու հարյուր վաթսուց հազար դոլար) գումարի չափով կարճաժամկետ վարկ տարեկան 15% տոկոսադրույքով, մեկ ամիս ժամկետով:

Վարկը տրամադրվում է ընկերության աշխատակիցների աշխատավարձի վճարման համար:

Հարկ է նշել, որ աշխատավարձի վճարման համար կարճաժամկետ վարկերի ձևակերպման հիմնական պատճառը ընկերության կողմից Հազարամյակի մարտահրավեր «Հիմնադրամ Հայաստան» ՊՈԱԿ–ի կողմից ֆինանսավորվող աշխատանքների կատարումն է, որոնց վճարումն, համաձայն պայմանագրերի պայմանների, իրականացվում է մոտ մեկ ամիս ուշացումով:

«Արփա-Սևան» ԲԲԸ

Տնօրեն՝

Պ. Հակոբյան

Կատարող Զ.Վարդանյան

հեռ. 26-11-90